ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 09

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստի

ք. Երևան 21 հոկտեմբեր 2021թ.

Ղեկավարվելով ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 18-ի N 25-Լ որոշմամբ և հիմք ընդունելով Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը, կայացել է՝ Կառավարման խորհրդի արտահերթ հեռակա նիստ:

Համաձայն Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի N 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի՝ Կառավարման խորհրդի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Մասնակցում են՝

Ռոմանոս Պետրոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Վաչե Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Արթուր Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Անի Իսպիրյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Սուրեն Գրիգորյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Գևորգ Բալումյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու
Մարատ Գրիգորյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան
Պերճ Խաչատրյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն

ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2021 թվականի գնումների պլանում փոփոխություններ կատարելուն համաձայնություն տալու վերաբերյալ:

Կառավարման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2021 թվականի գնումների պլանում փոփոխություններ կատարելուն:

Կողմ 8, Դեմ 1

Կառավարման խորհրդի դիտարկումները.

Կառավարման խորհրդի անդամ Պերճ Խաչատրյանը ներկայացրել է հետևյալ դիտարկումը՝

«Այսօր՝ 2021 թվականի հոկտեմբերի 21-ին հրավիրված ՀՀ ԲԸՏՄ կատավարման խոհրդի նիստի օրակարգի հարցի ընդունմանը

«քվեարկում եմ ԴԵՄ»:

Քվեաթերթիկը կցվում է:

Միաժամանակ, օրակարգի հարցի վերաբերյալ իմ դիրքորոշման հիմքում ընկած է ոչ թե այն հանգամանքը, որ ես՝ որպես տեսչական մարմնի խորհրդի անդամ, առարկում եմ աշխատակիցների համար համազգեստի ձեռբերմանը, այն այն, որ օրակարգի հարցի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը և տեղեկատվությունը ամբողջական չենք:

Մասնավորապես պարզ չէ, թե կատարված փոփոխությամբ տեսչական մարմնի գնումների պլանում սկզբնապես նախատեսված որ ծախսի փոխարեն պետք է կատարվի համազգեստի ձեռքբերումը:

Միաժամանակ, որևէ հիմնավորում ներկայացված չէ, թե ինչ գնահատման հիման վրա են հաշվարկվել լրակազմ համազգեստների արժեքները:

Խնդրում եմ վերը ներկայացված իմ դիրքորոշումը՝ որպես հատուկ կարծիք ամբողջությամբ ներառել նիստի արձանագրության մեջ:»

Քվեարկությամբ որոշումներն ընդունվել են ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)_____Ռ.Պետրոսյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ (խորհրդի քարտուղար) _____Հ. Բարսեղյան